ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2011թ. դեկտեմբերի 22 -ին թիվ 198 - Ա

2011 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ԴՊՐՈՑՆԵՐԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐԻ, ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՕՐՎԱ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի << Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի <<Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին>> թիվ 626-Ն որոշման պահանջներով՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2011 թվականին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով կատարված շինարարական աշխատանքների ընդունման համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Ա. Արսենյանին:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2011թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 198-Ա
կարգադրության

Կ Ա Զ Մ
ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ս.Պետրոսյան-ՀՀԱրագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ /հանձնաժողովի նախագահ/

Գ.Գյուրջյան-ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Գ.Սահակյան- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխ. մասնագետ

Ա.Ավագյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջին կարգի մասնագետ

Մ.Գրիգորյան-ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ

Գ. Եղիգարյան – ՀՀ քաղաքաշինության նախարարության Արագածոտնի մարզային տեսչության պետ / համաձայնությամբ/

- համայնքի ղեկավար

- դպրոցի տնօրեն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ